Հավելված
Հաստատված է ՀՀ էներգետիկայի
կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի
հուլիսի 31-ի № 54Ա որոշմամբ

«_____»
(բաշխիչ էլեկտրացանց)

**ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԲԱՇԽՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ**

Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր Ը

**(Լիցենզիա № _____, տրված Հայաստանի Հանրապետության
էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի
200_ թ. _____ «____» № _____որոշմամբ)**

1. Լիցենզիայում օգտագործված հիմնական հասկացությունները

Սույն լիցենզիայի իմաստով օգտագործված հիմնական հասկացություններն են՝

Արտադրող՝	էլեկտրական էներգիայի արտադրության գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ
Արտահանող՝	Հայաստանի Հանրապետությունից էլեկտրական էներգիայի արտահանման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ,
Էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանց ***կամ*** **Բաշխիչ ցանց՝**	Լիցենզավորված անձի կողմից կառավարվող և շահագործվող էլեկտրական էներգիայի բաշխման գծերի, ենթակայանների և այլ սարքավորումների միասնական համակարգ, որի միջոցով էլեկտրական էներգիան Արտադրողից և (կամ) Հաղորդողից հասցվում է Սպառողին (Բաժանորդին),
Էլեկտրական էներգիայի հաղորդման ցանց ***կամ*** **Հաղորդման ցանց՝**	էլեկտրական էներգիայի հաղորդման գծերի, ենթակայանների և այլ սարքավորումների միասնական

	համակարգ, որի միջոցով էլեկտրական էներգիան Արտադրողից կամ Ներկրողից հասցվում է Լիցենզավորված անձին և (կամ) Սպառողին (Բաժանորդին) և (կամ) տարանցվում երրորդ երկիր և որի կառավարումն ու շահագործումն իրականացնում է Հաղորդողը,
Էլեկտրական էներգիայի առուվաճառքի իրավունք ունեցող իրավաբանական անձ՝	իրավաբանական անձ, որին գործունեության լիցենզիայով տրված է էլեկտրական էներգիայի մեծածախ գնման և էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց և (կամ) Սպառողներին (Բաժանորդներին) էլեկտրական էներգիայի վաճառքի իրավունք,
Էլեկտրական էներգիայի մատակարարման երկկողմ պայմանագիր ***կամ*** **Երկկողմ պայմանագիր՝**	էլեկտրական էներգիայի պահանջարկ ունեցող Սպառողի (Բաժանորդի) և Լիցենզավորված անձի միջև կնքված պայմանագիր, որով սահմանվում են էլեկտրական էներգիայի առաքման և վաճառքի պայմանները,
Էլեկտրական էներգիայի մատակարարման եռակողմ պայմանագիր ***կամ*** **Եռակողմ պայմանագիր՝**	էլեկտրական էներգիայի պահանջարկ ունեցող Սպառողի (Բաժանորդի), Ենթասպառողի (Ենթաբաժանորդի) և Լիցենզավորված անձի միջև կնքված պայմանագիր, որով սահմանվում են էլեկտրական էներգիայի առաքման և վաճառքի, ինչպես նաև առաքման համար օգտագործվող՝ Լիցենզավորված անձին չպատկանող էլեկտրական ցանցի շահագործման և պահպանման, այդ ցանցը տնօրինողի ծախսերի հատուցման պայմանները,
Լիցենզավորված անձ ***կամ*** **Բաշխող՝**	_____

ընկերության անվանումը

Լիցենզիա՝	Հանձնաժողովի կողմից_____ *ընկերության անվանումը* տրված փաստաթուղթ, որը հավաստում է վերջինիս իրավունքը և պարտականությունը՝ սահմանված Սպասարկման տարածքում իրականացնելու էլեկտրական էներգիայի բաշխման գործունեություն,
Հաղորդող՝	էլեկտրական էներգիայի Հաղորդման ցանցով էլեկտրական էներգիայի հաղորդման գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ,
Հանձնաժողով՝	Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողով՝ էներգետիկայի բնագավառում կարգավորող մարմին,
Ներդրումներ՝	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումներ, որոնք ուղղված են լիցենզավորված գործունեության համար օգտակար և օգտագործվող ակտիվների մեծացմանը,
Ներկրող՝	Հայաստանի Հանրապետություն էլեկտրական էներգիայի ներկրման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ,
Սակագնային մարժա՝	այնպես, ինչպես սահմանված է «Երևանի էլեկտրացանց», «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց» և «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին գլխում,
Սպառող (Բաժանորդ)՝	Սպասարկման տարածքում էլեկտրական էներգիայի սպառման պահանջարկ ունեցող իրավաբանական կամ ֆիզիկական անձ, կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն, որն էլեկտրական էներգիայի մատակարարման երկկողմ կամ եռակողմ պայմանագիր է կնքել Լիցենզավորված անձի հետ,
Ենթասպառող (Ենթաբաժանորդ)՝	Սպասարկման տարածքում էլեկտրական էներգիայի սպառման պահանջարկ ունեցող իրավաբանական կամ

	ֆիզիկական անձ, կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն, որն էլեկտրական էներգիայի մատակարարման երկկողմ կամ եռակողմ պայմանագիր է կնքել Լիցենզավորված անձի հետ և որի էլեկտրական էներգիայի մատակարարումն իրականացվում է այլ Սպառողի (Բաժանորդի) էլեկտրական ցանցից,
Սպասարկման տարածք՝	սույն Լիցենզիայի №1 հավելվածում ներկայացված աշխարհագրական տարածք, որտեղ Լիցենզավորված անձին Լիցենզիայով տրվում է էլեկտրական էներգիայի բաշխման գործունեություն իրականացնելու իրավունք,
Լիցենզավորված անձին վերաբերող գաղտնապահական (կոնֆիդենցիալ) տեղեկատվություն՝	այնպես, ինչպես ձևակերպված է «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածում,
Տեխնոլոգիական կորուստներ՝	հաշվարկային եղանակներով որոշվող՝ Բաշխիչ ցանցում առաջացող էլեկտրաէներգիայի անխուսափելի տեխնիկական կորուստների և էլեկտրաէներգիայի հաշվառքի սարքերի սխալանքով պայմանավորված առևտրային կորուստների գումարային մեծություն,
Ֆորս մաժոր՝	արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությանը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը,

Էլեկտրաէներգետիկ համակարգի օպերատոր ***կամ*** **Համակարգի օպերատոր՝**	Հանձնաժողովի կողմից լիցենզավորված անձ, որի գործառույթները սահմանված են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով,
Էլեկտրաէներգետիկ շուկայի կանոններ ***կամ*** **Շուկայի կանոններ՝**	այնպես, ինչպես ձևակերպված է «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածում,
Բաշխման ծառայության սակագներ՝	Լիցենզավորված անձի կողմից այլ անձանց էլեկտրական էներգիան Բաշխիչ ցանցով Սպառողներին (Բաժանորդներին) բաշխելու, և (կամ) երրորդ երկիր էլեկտրական էներգիա տարանցելու ծառայության սակագներ, որոնք Հանձնաժողովի կողմից սահմանվում են ելնելով Լիցենզավորված անձի անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքից,
Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգ-տագործման կանոններ ***կամ*** **Մատակարարման և օգտագործման կանոններ՝**	Հանձնաժողովի կողմից հաստատված կարգավորման փաստաթղթերը, որոնցով սահմանվում են Լիցենզավորված անձի կողմից Սպառողներին (Բաժանորդներին) էլեկտրական էներգիայի մատակարարման ու վերջիններիս կողմից օգտագործման կանոնները և պայմանները:

2. Լիցենզիայի գործողության ժամկետը

2.1 Լիցենզիան տրվում է անժամկետ, Լիցենզավորված անձի որոշ բացառիկ իրավունքների ժամանակային սահմանափակմամբ, այնպես, ինչպես ամրագրված է Լիցենզիայի 3.3 կետում:

3. Լիցենզավորված գործունեության էությունը կազմող գործառույթները

3.1 Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Սպասարկման տարածքում իրականացնել էլեկտրական էներգիայի բաշխման գործունեության էությունը կազմող հետևյալ գործառույթները.

ա) Բաշխիչ ցանցի սպասարկում, շահագործում և բարելավում,

բ) Բաշխիչ ցանցով էլեկտրական էներգիայի մատակարարում Սպառողներին (Բաժանորդներին),

գ) Սպասարկման տարածքում էլեկտրական էներգիայի պահանջարկը բավարարելու նպատակով Բաշխիչ ցանցի ընդլայնում, նոր սպառողների սպասարկում,

դ) Սպառողներին (Բաժանորդներին) էլեկտրական էներգիայի մատակարարման նպատակով Էլեկտրական էներգիայի առուվաճառքի իրավունք ունեցող Լիցենզավորված անձանցից էլեկտրական էներգիայի մեծածախ գնում,

ե) էլեկտրական էներգիայի վաճառք Սպառողներին (Բաժանորդներին),

զ) էլեկտրական էներգիան հաշվառող առևտրային հաշվիչների տեղադրում և սպասարկում, այդ թվում՝ Սպառողների (Բաժանորդների) տարածքում,

է) Բաշխիչ ցանցի կառավարում և կարգավարում,

ը) էլեկտրական էներգիայի մատակարարման Երկկողմ կամ Եռակողմ պայմանագրերի կնքում, մատակարարված (վաճառված) էլեկտրական էներգիայի դիմաց գումարների գանձում:

3.2 Սպասարկման տարածքում Լիցենզավորված անձին տրվում է Լիցենզիայի 3.1 կետի ա), բ), գ), ե), զ), է) ենթակետերով ամրագրված գործառույթներն իրականացնելու բացառիկ իրավունք՝ բացառությամբ «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերի:

3.3 Լիցենզավորված անձին «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետով սահմանված ժամկետով տրվում է Լիցենզիայի 3.1 կետի դ), ը) ենթակետերով ամրագրված գործառույթներն իրականացնելու բացառիկ իրավունք, բացառությամբ «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերի:

3.4 Սպասարկման տարածքում այլ անձանց էլեկտրակայանքների (էլեկտրատեղակայանքների) միջոցով էլեկտրասնուցում ստացող Սպառողների (Բաժանորդների) էլեկտրասնուցումն անմիջապես Բաշխիչ ցանցից իրականացնելու նպատակով Լիցենզավորված անձն իրավունք ունի իրականացնել

այդ նպատակին ուղղված ներդրումային ծրագրեր: Այդ ծրագրերի նպատակահարմարությունը և տնտեսական արդյունավետությունը գնահատվում է Հանձնաժողովի կողմից և դրական որոշման դեպքում դրանք իրականացվում են Հանձնաժողովի հետ համաձայնեցված կարգով, իսկ հիմնավորված և անհրաժեշտ ծախսերը հաշվի են առնվում Սակագնային մարժայում և (կամ) Բաշխման ծառայության սակագներում: Լիցենզավորված անձի՝ սույն հոդվածում նշված ծրագրերը կարող են ներկայացվել առանձին կամ որպես 4.9 կետում սահմանված ներդրումային ծրագրերի մաս:

3.5 Առանց Հանձնաժողովի հետ համաձայնեցնելու Լիցենզավորված անձն իրավունք չունի Լիցենզիայով սահմանված որևէ իրավունք կամ պարտականություն պայմանագրային կամ այլ հիմունքներով ամբողջովին կամ մասնակի օտարել, զիջել, գրավ դնել կամ փոխանցել մեկ այլ անձի:

3.6 Լիցենզավորված գործունեություն իրականացնելու, էլեկտրաէներգիայի կորուստները կանխելու համար Լիցենզավորված անձն իրավունք ունի ազատ մուտք գործել իր տնօրինության տակ չգտնվող այն ենթակայանները, որոնցից սնվում են Սպառողները (Բաժանորդները) և (կամ) Լիցենզավորված անձը և հսկողություն իրականացնել, կիրառել արդյունավետ ու ողջամիտ տեխնիկական միջոցառումներ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված օրինակելի պայմանագրերով կամ պարտադիր պայմաններով և (կամ) Շուկայի կանոններով սահմանված կարգով:

4. Լիցենզավորված գործունեության պայմանները

4.1 Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության օրենքների, այդ թվում՝ «Էներգետիկայի մասին», «Երևանի էլեկտրացանց», «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց» և «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Լիցենզիայի, Հանձնաժողովի կողմից սահմանված և այլ իրավական ակտերի պահանջներին:

4.2 Լիցենզավորված անձն իրավունք ունի և պարտավոր է «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի գերակայությամբ Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից Սպասարկման տարածքում գտնվող և Բաշխիչ ցանցից սնվող Սպառողներին (Բաժանորդներին) բաշխել էլեկտրական էներգիա, ինչպես նաև նոր կամ վերակառուցվող սպառողներին առաջարկել Բաշխիչ ցանցին կամ այլ Սպառողների (Բաժանորդների) տեղակայանքներին միանալու տեխնիկական պայմաններ՝ ապահովելով նրանց էլեկտրամատակարարումը:

4.3 Լիցենզավորված անձը, տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում, պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված Բաշխման ծառայության սակագներով Բաշխիչ ցանցով մինչև համապատասխան սահմանազատման կետերը տարանցել այլ անձանց էլեկտրաէներգիան՝ համաձայն

«Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածի և Շուկայի կանոնների:

4.4 «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետով սահմանված ժամկետից հետո Լիցենզավորված անձը, տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում, պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված Բաշխման ծառայության սակագներով ապահովել էլեկտրական էներգիայի առուվաճառքի իրավունք ունեցող այլ անձանց էլեկտրական էներգիայի մուտքը Բաշխիչ ցանց և բաշխումը Սպառողներին (Բաժանորդներին)՝ համաձայն «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածի և Շուկայի կանոնների:

4.5 Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել Սպառողներին (Բաժանորդներին) մատակարարվող էլեկտրական էներգիայի առևտրային հաշվառքի սարքերի սպասարկումը և շահագործումը՝ ներառյալ ստուգաչափումը:

4.6 Լիցենզավորված անձի և էլեկտրաէներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց միջև կնքված պայմանագրերը պետք է համապատասխանեն Հանձնաժողովի սահմանած պայմանագրերի օրինակելի ձևերին և (կամ) պարտադիր պայմաններին: Այդ պայմանագրերը ուժի մեջ են մտնում Հանձնաժողովում սահմանված կարգով գրանցվելու պահից:

4.7 Լիցենզավորված անձը պարտավոր է «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, Շուկայի կանոններին, Հայաստանի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և ծառայությունների մատուցման պայմանագրին համապատասխան՝ կատարել Համակարգի օպերատորի օպերատիվ հրահանգներն ու կարգադրությունները:

4.8 Լիցենզավորված անձը պարտավոր է Շուկայի կանոններին, Հայաստանի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և ծառայությունների մատուցման պայմանագրին համապատասխան՝ աջակցել Համակարգի օպերատորի կողմից իրականացվող էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիությունն ու անվտանգությունն ապահովող՝ Լիցենզավորված անձի սեփականությունը հանդիսացող պաշտպանիչ սարքերի, կարգավորիչների զննումներին, օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով ու պայմանագրերով սահմանված կարգով ապահովել այդ սարքերի շահագործումը, կատարել դրանց նորոգման, փոխարինման և այլ անհրաժեշտ աշխատանքներ, ինչպես նաև աջակցել իր տնօրինության տակ գտնվող՝ այլ անձանց սեփականությունը հանդիսացող պաշտպանիչ սարքերի, կարգավորիչների զննման աշխատանքներին:

4.9 Լիցենզավորված անձը Հանձնաժողովի համաձայնեցմանն է ներկայացնում Բաշխիչ ցանցի բարելավման և ընդլայնման լիցենզավորված գործունեությունը տեխնիկական կանոնակարգերին համապատասխանեցման, ինչպես նաև Սպառողներին (Բաժանորդներին) մատուցվող ծառայությունների որակի բարելավման և շրջակա միջավայրի պահպանման ներդրումային ծրագրերը՝ համապատասխան հիմնավորումներով, Լիցենզիան ուժի մեջ մտնելու օրվանից 5

ամսվա ընթացքում: Լիցենզավորված անձի սկզբնական ծրագիրը պետք է նախատեսի առաջին տարվա նրա ներդրումային առաջարկները: Ներկայացված ծրագրերի, այդ թվում՝ նրանցում նախատեսված ներդրումների անհրաժեշտության և արդյունավետության, ապագա Սակագնային մարժայի և (կամ) Բաշխման ծառայության սակագների վրա նրանց ազդեցության ուսումնասիրության հիման վրա՝ 60-օրյա ժամկետում, Հանձնաժողովը կամ ամբողջությամբ ընդունում, կամ ամբողջությամբ մերժում է այն, կամ էլ ընդունում է ներդրումային ծրագրի մի մասը: Լիցենզավորված անձը պետք է իրականացնի Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագիրը, որին համապատասխան կատարված ներդրումները ներառվում են Սակագնային մարժայում և (կամ) Բաշխման ծառայության սակագներում՝ Լիցենզիայի 2-րդ հավելվածում ամրագրված մեթոդաբանությամբ:

Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրի ընդունումից 6 ամիս անց, այնուհետև յուրաքանչյուր տարի, լիցենզավորված անձը ծրագիր է ներկայացնում հաջորդ 3 տարվա համար: Հանձնաժողովը ուսումնասիրում և դրա վերաբերյալ որոշում է կայացնում սահմանված կարգին համաձայն:

Այն դեպքում, երբ Լիցենզավորված անձը իրականացնում է ներդրումային ծրագիր, որը Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով մերժվել է, ապա այդ ծրագրի իրականացման արդյունքում առաջացած ցուցանիշների բարելավումը սակագներ սահմանելիս Հանձնաժողովը հաշվի չի առնի այնքան ժամանակ, մինչև Լիցենզավորված անձը իր ներդրումները հետ ստանա: Եթե Լիցենզավորված անձը որոշում է իր ռիսկով իրականացնել Հանձնաժողովի կողմից մերժված ներդրումային ծրագիրը, ապա նա պարտավոր է այդ մասին տեղյակ պահել Հանձնաժողովին և Հանձնաժողովի պահանջով վարել տվյալ ծրագրի իրականացման համար առանձնացված հաշվառում:

4.10 Լիցենզիան ուժի մեջ մտնելուց հետո 12 ամսվա ընթացքում Լիցենզավորված անձը Հանձնաժողովի համաձայնեցմանն է ներկայացնում Տեխնոլոգիական կորուստների հաշվարկման մեթոդիկան, որի վերաբերյալ տարաձայնությունների առկայության դեպքում այն ուղարկվում է փորձաքննության՝ համատեղ ընտրված փորձագիտական ընկերություն կամ առանձին փորձագետների: Նշված սկզբունքով են լուծվում նաև Լիցենզավորված անձի կողմից ներկայացվող Սակագնային մարժայում և (կամ) Բաշխման ծառայության սակագներում ներառվող Տեխնոլոգիական կորուստների մեծության վերաբերյալ տարաձայնությունները:

4.11 Լիցենզավորված անձը՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգի և ժամանակացույցի համաձայն, Հանձնաժողով է ներկայացնում հաջորդ տարվա էլեկտրական էներգիայի բեռի գրաֆիկների, սպառման ծավալների և Տեխնոլոգիական կորուստների կանխատեսումները:

4.12 Լիցենզավորված անձը՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, Հանձնաժողով է ներկայացնում տեղեկատվություն և հաշվետվություններ լիցենզավորված գործունեության մասին:

4.13 Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Հանձնաժողովի կողմից սահմանված իրավական ակտերի պահանջներին:

4.14 Լիցենզավորված անձը պարտավոր է վարել լիցենզավորված գործունեության առանձացված հաշվապահական հաշվառում:

4.15 Յուրաքանչյուր տարի՝ մինչև մայիսի 30-ը, Լիցենզավորված անձը պարտավոր է մամուլում հրապարակել նախորդ տարվա իր ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվությունը՝ համաձայն Հանձնաժողովի կողմից սահմանված ձևերի:

4.16 Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունները հրապարակային են, եթե դրանք Լիցենզավորված անձի կողմից չեն համարվում գաղտնի և նշված չեն որպես «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն»: Լիցենզավորված անձն իրավունք ունի ապացուցել, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվության») հրապարակումը կարող է վնասել ընկերության մրցակցային գործունեության շահերին, որը գերակա է հրապարակման հասարակական շահից: Հանձնաժողովն իրավասու է ընդունել կամ մերժել նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Լիցենզավորված անձի խնդրանքը:

4.17 Լիցենզավորված անձի կողմից ապրանքների ձեռքբերման և ծառայությունների գնման գործարքները պետք է իրականացվեն՝ համաձայն «Երևանի էլեկտրացանց», «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց» և «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի:

4.18 Լիցենզավորված անձը պարտավոր է բոլոր գնումները, ներառյալ՝ ծառայությունների և ապրանքների ձեռքբերումը, իրականացնել գնումների իրականացման կարգին համապատասխան, որը Լիցենզավորված անձի ներկայացմամբ հաստատում է Հանձնաժողովը: Սույն հոդվածում նշված կարգը Լիցենզավորված անձը Հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում Լիցենզիան ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:

4.19 Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար:

4.20 Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից մինչև 2004 թվականի հունվարի 1-ը Լիցենզավորված անձի համար գործում է ԱՄՆ արժույթով արտահայտված անփոփոխ Սակագնային մարժա, որն, առանց ավելացված արժեքի հարկի, 1 կՎտժ-ի դիմաց կկազմի 1,59 ԱՄՆ ցենտին համարժեք դրամ:

Սկսած 2004 թվականի հունվարի 1-ից Սակագնային մարժան հաշվարկվում է Լիցենզիայի №2 հավելվածում ամրագրված մեթոդաբանությամբ, սակայն 2004 թվականի համար այն չի կարող փոքր լինել 1 կՎտժ-ի համար 1,50 ԱՄՆ ցենտին համարժեք դրամից՝ առանց ավելացված արժեքի հարկի:

4.21 Հայաստանի Հանրապետության օրենսդրության, գործող իրավական ակտերի, տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների փոփոխությամբ կամ նորերի հաստատմամբ պայմանավորված՝ Լիցենզավորված անձի հիմնավորված վնասները և(կամ) լրացուցիչ ծախսերը փոխհատուցվում են Սակագնային մարժայով և (կամ) Բաշխման ծառայության սակագներով: Լրացուցիչ ծախսերի և (կամ) վնասների փոխհատուցման ենթակա գումարների վերաբերյալ Լիցենզավորված անձի հետ տարաձայնություններ ունենալու դեպքում, Հանձնաժողովը, Լիցենզավորված անձի հետ համատեղ, ներգրավում է անկախ փորձագետների:

4.22 Լիցենզավորված անձը պարտավոր է էլեկտրական էներգիայի առուվաճառքի պայմանագրերում ամրագրված ժամկետներում ապահովել իր կողմից գնված էլեկտրական էներգիայի, իրեն մատուցած ծառայությունների և կատարած աշխատանքների դիմաց 100 տոկոս վճարումները:

4.23 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անվտանգության և բնապահպանության նորմերի պահանջների կատարմանն ուղղված միջոցառումները Լիցենզավորված անձն իրականացնում է Հանձնաժողովի հաստատած փուլային ծրագրով և ժամանակացույցով, որի իրականացման ընթացքում նրանում ներառված տեխնիկական կանոնակարգերով սահմանված նորմերի պահանջներից շեղումները չեն համարվում խախտումներ: Նշված ծրագիրը Լիցենզավորված անձը Հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից հետո 12 ամսվա ընթացքում:

4.24 Լիցենզավորված անձը պարտավոր է անմիջապես Հանձնաժողով հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտումների:

4.25 Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել Սպառողների (Բաժանորդների) հուսալի էլեկտրամատակարարումը՝ համաձայն Լիցենզիայի 4.28 կետի պահանջների:

4.26 Լիցենզավորված անձի և Սպառողների (Բաժանորդների) փոխհարաբերությունները կարգավորվում են մատակարարման պայմանագրերով, որոնց օրինակելի ձևերը սահմանում է Հանձնաժողովը, Մատակարարման և օգտագործման կանոններով, օրենքներով և այլ իրավական ակտերով:

4.27 Նորոգումներով և չվճարումներով պայմանավորված՝ Սպառողի (Բաժանորդի) հոսանքազրկումները, ինչպես նաև ցանկացած հոսանքազրկումից հետո էլեկտրական էներգիայի մատակարարման վերականգնումը Լիցենզավորված

անձն իրականացնում է մատակարարման և օգտագործման կանոններին ու պայմանագրով սահմանված կարգին համապատասխան:

4.28 Հանձնաժողովը Լիցենզավորված անձի կողմից Սպառողների (Բաժանորդների) սպասարկման որակը գնահատում է ստորև նշված ցուցանիշների և նրա ու այլ երկրների համեմատության ենթակա ցուցանիշների վերլուծության հիման վրա: Այդ ցուցանիշներն են.

ա) բոլոր Սպառողների (Բաժանորդների) հոսանքազրկումների միջին հաճախությունը՝ խմբավորված ըստ հոսանքազրկման պատճառների, որը որոշվում է Սպառողների (Բանորդների) տարեկան անջատումների քանակը այդ տարվա ընթացքում սպասարկված Սպառողների (Բաժանորդների) միջին քանակին բաժանելու միջոցով,

բ) բոլոր Սպառողների (Բաժանորդների) հոսանքազրկումների միջին տևողությունը, որը որոշվում է հոսանքազրկումների՝ որպեներով արտահայտված ընդհանուր տևողությունը նշված տարվա ընթացքում սպասարկված Սպառողների (Բաժանորդների) միջին թվին բաժանելու միջոցով,

գ) Սպառողների (Բաժանորդների) դիմում-բողոքների և հարցադրումների ընդհանուր քանակը՝ ըստ դրանք հարուցող պատճառների և Սպառողների (Բաժանորդների) խմբերի,

դ) թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման և հաճախականության շեղման դեպքերի քանակը և տևողությունը:

Նշված ցուցանիշների մեծությունները հաշվարկելիս հաշվի չեն առնվում Ֆորս մաժորով պայմանավորված՝ Սպառողների (Բաժանորդների) հոսանքազրկման և սպասարկման որակի անկման դեպքերը, ինչպես նաև սպասարկման հետ կապված այն դեպքերը, որոնք պայմանավորված են Լիցենզավորված անձի գործունեությամբ կամ նրա սեփականությունը չհանդիսացող, կամ նրա կողմից չկառավարվող սարքավորումներով: Նման դեպքերի մասին Լիցենզավորված անձը հատուկ հաշվետվություն է ներկայացնում Հանձնաժողով:

4.29 Լիցենզիան ուժի մեջ մտնելուց հետո առավելագույնը 18 ամսվա ընթացքում Լիցենզավորված անձը Հանձնաժողով պետք է ներկայացնի Լիցենզիայի 4.28 կետում նշված ցուցանիշների փաստացի մեծությունների վերաբերյալ նախորդ 12 ամիսների հաշվետվություն, ինչպես նաև այդ ցուցանիշների բարելավմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների՝ ներառյալ ներդրումային կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերը, որոնց վերաբերյալ Հանձնաժողովը որոշում է կայացնում՝ համաձայն Լիցենզիայի 4.9 կետի պահանջների, իսկ Լիցենզիայի 4.28 կետում նշված ցուցանիշների ծրագրային մեծություններն ըստ տարիների հաստատվում են Հանձնաժողովի որոշմամբ:

4.30 Լիցենզավորված անձը պարտավոր է իր տարածքային ստորաբաժանումներում ապահովել շուրջօրյա հեռախոսակապ, որի միջոցով Սպառողները (Բաժանորդները) կարող են նրան տեղեկատվություն հաղորդել կամ ստանալ:

4.31 Այն դեպքերում, երբ Սպառողները (Բաժանորդները), այդ թվում բնակչությունը, իրենց միջոցներով ձեռք են բերում (գնում են) Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերի պահանջները և Հանձնաժողովի հետ համաձայնեցված պայմանները բավարարող առևտրային հաշվիչներ, որոնք ընդունակ են գրանցել նրանց էլեկտրական էներգիայի նաև գիշերային ժամերի սպառումը, ապա Լիցենզավորված անձը պարտավոր է տեղադրել դրանք:

Մինչ Լիցենզիան ուժի մեջ մտնելը, նման հաշվիչների գնման հետ կապված բնակչության կանխավճարները ենթակա են հատուցման՝ համաձայն «Երևանի էլեկտրացանց», «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց» և «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հանձնաժողովի սահմանված կարգի:

4.32 Լիցենզավորված անձն իրավունք ունի դադարեցնել Սպառողի (Բաժանորդի) էլեկտրամատակարարումը, եթե վերջինս մատակարարման պայմանագրով նախատեսված ժամկետներում ստացված էլեկտրական էներգիայի դիմաց չի վճարել: Նախքան Սպառողի (Բաժանորդի) էլեկտրամատակարարման դադարեցումը, Լիցենզավորված անձը պարտավոր է կիրառել Հանձնաժողովի սահմանած բոլոր նախազգուշական միջոցները: Սպառողներից, բացառությամբ էներգիան կենցաղային սպառման համար օգտագործող Բաժանորդների (բնակչության), Լիցենզավորված անձն իրավունք ունի հաշվարկել և գանձել տույժ՝ մատակարարման պայմանագրով և Մատակարարման և օգտագործման կանոններով սահմանված կարգով և չափով:

Լիցենզավորված անձը պարտավոր է Մատակարարման և օգտագործման կանոններով, Հանձնաժողովի իրավական ակտերով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով էլեկտրաէներգիա մատակարարել առավել կարևոր նշանակություն ունեցող Սպառողներին (Բաժանորդներին)՝ հիմք ընդունելով «Երևանի էլեկտրացանց», «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց» և «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ գլխի 11-րդ հոդվածը:

4.33 Լիցենզավորված անձն առանց Հանձնաժողովի թույլտվության չի կարող դառնալ լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնետեր, փայատեր կամ միավորվել լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ:

Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքը (շենքեր, շինություններ, կառույցներ, արտադրական հզորություններ, գործող էլեկտրակայանքներ /էլեկտրատեղակայանքներ/ և գծեր) վաճառելու կամ գույքի նկատմամբ իրավունքը որևէ այլ կերպ փոխանցելու (այդ թվում՝ ծանրաբեռնելու) համար Լիցենզավորված անձը դիմում է Հանձնաժողով՝ համաձայնություն ստանալու: Սույն կետում նշված որևէ հիմքով դիմում ստանալու

դեպքում Հանձնաժողովը համապատասխան որոշում է կայացնում 60 օրվա ընթացքում:

4.34 Լիցենզավորված անձն իր գործունեությունն իրականացնելիս, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, պարտավոր է ապահովել քաղաքացիների, սպասարակող անձնակազմի կյանքի և առողջության անվտանգությունը:

4.35 Լիցենզավորված անձի ներկայացրած դիմումի վերաբերյալ բացասական որոշում կայացնելու դեպքում Հանձնաժողովը նրանում պետք է նշի մերժման պատճառները: Սույն լիցենզիայում կամ հանձնաժողովի սահմանած կարգերում նշված ժամկետներում հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձի դիմումին չարձագանքելու դեպքում այն համարվում է ընդունելի: Եթե սույն լիցենզիայում կամ Հանձնաժողովի սահմանած կարգերում Հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձի դիմումին արձագանքելու ժամկետ սահմանված չէ, ապա այդպիսի ժամկետ է համարվում 60 օրը:

4.36 Լիցենզավորված անձի ղեկավար աշխատողների (տնօրինության) կազմը պետք է համապատասխանի Լիցենզավորված անձի կողմից նախապես Հանձնաժողովի հետ համաձայնեցված չափորոշիչներին:

4.37 Լիցենզավորված անձն առանց Հանձնաժողովի համաձայնության իրավունք չունի զբաղվել այլ տնտեսական գործունեությամբ:

4.38 Լիցենզավորված անձը կարող է բանկային հաշիվներ բացել, տեղափոխել կամ համանման այլ փոփոխություններ իրականացնել միայն Հանձնաժողովի համաձայնությամբ:

4.39 Արտադրողներին և շուկային ծառայություններ մատուցող ընկերություններին առաքված էլեկտրական էներգիայի (հզորության) և մատուցված ծառայությունների դիմաց երաշխավորված վճարումներ ապահովելու համար լիցենզավորված անձը հայկական առևտրային բանկում բացում է հատուկ հաշիվ: Յուրաքանյուր ամսվա սկզբից այդ հաշվի համարին մուտքագրված գումարները համարվում են գրավադրված՝ էլեկտրական էներգիա (հզորություն) արտադրող և շուկային ծառայություններ մատուցող ընկերությունների օգտին՝ որպես նախորդ ամսվա վերջի դրությամբ առկա պարտքերի վճարումը կատարելու ապահովման միջոց: Գրավը դադարում է նախորդ ամսվա վերջի դրությամբ առկա դրամական պարտավորության վճարմամբ:

4.40 Լիցենզավորված անձը պարտավոր է բաշխված էլեկտրաէներգիայի դիմաց սպառողներից փոխանցված կամ կանխիկ գանձված գումարները մուտքագրել 4.39 կետում նշված հատուկ հաշվի համարին:

4.41 Էլեկտրական էներգիա (հզորություն) արտադրողներին և շուկային ծառայություններ մատուցող ընկերություններին առաքված էլեկտրական էներգիայի (հզորության) և մատուցված ծառայությունների դիմաց երաշխավորված

վճարումներ ապահովելու նպատակով լիցենզավորված անձը՝ հանձնաժողովի հետ համաձայնեցված նույն բանկում, գրավադրում է երաշխիքային գումար՝ որպես նախորդ ամսվա վերջի դրությամբ առկա պարտքերի վճարումը կատարելու ապահովման լրացուցիչ միջոց: Նշված երաշխիքային գումարի սպառման կամ մասնակի օգտագործման դեպքում լիցենզավորված անձը պարտավոր է եռօրյա ժամկետում լրացնել այն մինչև սահմանված չափաքանակը: Երաշխիքային գումարը 2003 թվականի համար կազմում է 600 հազար ԱՄՆ դոլար, իսկ 2004 թվականից սկսած՝ նախորդ տարվա միջին ամսական գնված էլեկտրական էներգիայի (հզորության) և մատուցված ծառայությունների ընդհանուր գումարի 10%-ի չափով:

4.42 Հատուկ հաշվից վճարումներ կատարելու եւ երաշխիքային գումարն օգտագործելու կարգը սահմանում է հանձնաժողովը՝ խորհրդակցելով շուկայի մասնակիցների հետ: Նշված կարգի հաստատումից հետո լիցենզավորված անձը պարտավոր է այդ կարգի կիրարկման հանձնարարականներ ներկայացնել 4.39 կետում նշված հատուկ հաշիվը և 4.41 կետում նշված երաշխիքային գումարի հաշիվը սպասարկող բանկին:

5. Լիցենզավորված գործունեության վերահսկում

5.1 Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և իր կողմից սահմանված կարգերի :

5.2 Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը և նրա կողմից լիազորված ներկայացուցիչներն իրավունք ունեն ազատ մուտք գործել Լիցենզավորված անձի տարածք: Վերահսկումն իրականացնելու ընթացքում Լիցենզավորված անձը պետք է լիովին համագործակցի և աջակցի Հանձնաժողովին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչին:

5.3 Հանձնաժողովի կողմից լիազորված ներկայացուցիչները Լիցենզավորված անձի տարածքում պահպանում են ընկերության ներքին կանոնակարգը, անվտանգության և հակահրդեհային կանոնները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:

5.4 Հանձնաժողովը, տեղյակ պահելով Լիցենզավորված անձին, Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան, իր սահմանած կարգով և ժամկետներում, բայց ոչ հաճախ, քան տարին մեկ անգամ, իր կողմից ընտրված անկախ փորձագիտական ընկերության կամ անկախ փորձագետների միջոցով կարող է իրականացնել Լիցենզավորված անձի կողմից Լիցենզիայի պայմանների կատարման ուսումնասիրություն և Հանձնաժողով ներկայացված հաշվետվությունների հավաստիության ստուգում: Ուսումնասիրության և ստուգման ծախսերը ներառվում են Սակագնային մարժայում և (կամ) Բաշխման ծառայության

սակագներում: Սակագնային մարժայով և (կամ) Բաշխման ծառայության սակագներով այդ ծախսերի փոխհատուցումը կարող է լրիվ կամ մասնակիորեն չիրականացվել, եթե ուսումնասիրության կամ ստուգման արդյունքում հայտնաբերվել է, որ Լիցենզավորված անձը միտումնավոր կերպով սխալ տվյալներ է ներկայացրել Հանձնաժողով կամ Հանձնաժողովից տվյալներ է թաքցրել:

6. Տուգանքներ, Լիցենզիայի կասեցում և Լիցենզիայից զրկում

6.1 «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հանձնաժողովի իրավական ակտերի պահանջները և Լիցենզիայի պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու դեպքում, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հանձնաժողովը իրավասու է կիրառել հետևյալ տույժերը.

ա) նախազգուշացում և խախտումները վերացնելու հանձնարարականներ,
բ) սակագների նվազեցում,
գ) Լիցենզիայի կասեցում,
դ) Լիցենզիայից զրկում:

Նշված տույժերի կիրառման կարգը սահմանում է Հանձնաժողովը, համաձայն «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի:

6.2 Լիցենզավորված անձին Լիցենզիայից զրկելու դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

6.3 Լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել նաև Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ նրա գրավոր դիմումի հիման վրա: Նշված դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Մինչև Լիցենզիայի կասեցման կամ զրկման մասին Հանձնաժողովի կողմից համապատասխան որոշում կայացնելը, Լիցենզավորված անձը պարտավոր է շարունակել գործունեությունը՝ համաձայն Լիցենզիայի պայմանների:

6.4 Լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության՝ սույն Լիցենզիայի 6.1 կետով սահմանված կարգով, եթե (այնքանով, որքանով) նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս մաժորի հետևանք են:

7. Լիցենզիայի դրույթների և պայմանների փոփոխություն

7.1 Լիցենզիայում փոփոխություններ կատարելու վերաբերյալ Լիցենզավորված անձի դիմումի ընդունումը և քննարկումը կատարվում են Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

Հանձնաժողովի նախաձեռնությամբ Լիցենզիայի փոփոխություններ կատարվում են Լիցենզավորված անձի համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նախատեսվող փոփոխություններն անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետության օրենքների պատշաճ կատարումն ապահովելու համար:

Հանձնաժողովի նախաձեռնությամբ Լիցենզիայում կատարված փոփոխությունների հետևանքով առաջացած Լիցենզավորված անձի լրացուցիչ ծախսերը և (կամ) իրական (հիմնավորված) վնասները ներառվում են Սակագնային մարժայում և (կամ) Բաշխման ծառայության սակագներում:

8. Ծանուցում

8.1 Լիցենզիայի վերաբերյալ պաշտոնական բոլոր ծանուցումները, հայտերը, պահանջները կամ այլ տեղեկատվությունները պետք է լինեն գրավոր և ուղարկվեն սուրհանդակի միջոցով կամ պատվիրված նամակով՝ պահանջելով ստացական: Ցանկացած ծանուցում կամ հաղորդագրություն ուժի մեջ է համարվում ստացման պահից, իսկ եթե այն չի ստացվել հասցեատիրոջ մեղքով՝ հասցեատիրոջը հասցնելու փորձի պահից: Հաղորդագրությունը սկզբից ևեթ կարող է ուղարկվել էլեկտրոնային փոստով կամ ֆաքսով և ուժի մեջ է համարվում ստացման օրվանից, եթե ստացվել է մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտը:

<u>Լիցենզավորված անձի փոստային</u>

<u>կարգաթիվը</u> _____

Հասցեն

_____

Անվանումը

_____

Բանկային հաշվեհամարները

_____

Տնօրենի (նախագահի) անունը, ազգանունը

_____

Ի վկայություն սույնի, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը սույն Լիցենզիան տրամադրել է

_____

(ընկերության անվանումը)

_____

(իրավաբանական հասցեն)

Գրանցման ամսաթիվը

«_____»_____ **200** թ.

Գրանցման համարը

№ _____

Հանձնաժողովի պատասխանատու անձ _____

Հավելված 1

ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի
2002 թվականի հուլիսի 31-ի № 54Ա որոշմամբ
հաստատված լիցենզիայի պայմանների

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԲԱՇԽՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ

1. Հայաստանի Հանրապետության տարածք

Հավելված 2

ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի
2002 թվականի հուլիսի 31-ի № 54Ա որոշմամբ
հաստատված լիցենզիայի պայմանների

Սակագնային մարժայի հաշվարկման մեթոդաբանություն

1. Սակագնային մարժայի հաշվարկման մեթոդաբանության հիմքում դրված է Լիցենզավորված անձի անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքը, այսինքն՝

Անհրաժեշտ հասույթ = Շահագործման և պահպանման ծախսեր +
+ Մաշվածություն + Գնված էլեկտրաէներգիայի արժեք + Հարկեր +
+ Անհուսալի դեբիտորական պարտքեր + Թույլատրելի զուտ շահույթ
(հարկումից հետո) ,

որտեղ՝ Շահագործման և պահպանման ծախսերը կներառեն Հանձնաժողովի կողմից թույլատրված տեխնիկական սպասարկման և նորոգման, շահագործման համար անհրաժեշտ նյութերի ծախսերը, աշխատավարձը, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները, վարչական, կառավարման, իրացման և ընդհանուր բնույթի այլ ծախսեր:

Մինչև 2004 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Սակագնային մարժայի հաշվարկում ընդգրկված տարեկան շահագործման և պահպանման ծախսերը կկազմեն 28 մլն ԱՄՆ դոլար: Հետագա տարիներին դրանք կորոշվեն ֆինանսական հաշվետվություններով ներկայացված փաստացի ծախսերի վերլուծության և անկախ փորձագետների եզրակացության հիման վրա:

Մաշվածությունը կհաշվարկվի գծային եղանակով: Մասնավորեցման պահին առկա հիմնական ակտիվների մաշվածությունը կհաշվարկվի՝ մրցույթի արդյունքում ձևավորված բաժնետոմսերի 100%-ի արժեքի և, համաձայն բաժնետոմսերի վաճառքի պայմանագրի, Լիցենզավորված անձին փոխանցված պարտավորությունների մեծության գումարից: Այդ ակտիվների նկատմամբ կկիրառվի մաշվածության 10% նորմա:

Հետագա Ներդրումների հաշվին ստեղծված հիմնական ակտիվների արժեքի նկատմամբ կկիրառվի 4% մաշվածության նորմա:

Ինչպես սկզբնական, այնպես էլ հետագա Ներդրումների հաշվին ստեղծված հիմնական ակտիվների արժեքները կամրագրվեն Հայաստանի Հանրապետության դրամով, վերահաշվարկելով արտարժույթով կատարված ծախսերը՝ կատարման պահի փոխարժեքով: Այդ արժեքները ենթակա են վերագնահատման միայն ԱՄՆ դոլար - Հայաստանի Հանրապետության դրամ փոխարժեքով, եթե վերջին վերագնահատումից հետո այն փոփոխվել է ավելի քան 3,0%:

Գնված էլեկտրաէներգիայի արժեքը կորոշվի հետևյալ բանաձևով.

Գնված էլեկտրաէներգիայի արժեք = [Իրացված էլեկտրաէներգիայի քանակություն : (1 - Հանձնաժողովի

կողմից թույլատրված կորուստների նորմ)] x Էլեկտրաէներգիայի գնման միջին կշռութային սակագին:

Հարկերը (բացառությամբ ավելացված արժեքի հարկի) կհաշվարկվեն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության համաձայն՝ հիմք ընդունելով Սակագնային մարժայի հաշվարկում ընդունված հասույթը և ծախսերը:

Անհուսալի դեբիտորական պարտքերը, որոնք Լիցենզավորված անձի կողմից Սպառողներին (Բաժանորդներին) առաքված, սակայն չվճարված էլեկտրաէներգիայի արժեքն են, կներառվեն անհրաժեշտ հասույթի կազմում, բայց ոչ ավելի, քան առաքված էլեկտրաէներգիայի արժեքի 2,0%-ի չափով:

Թույլատրելի զուտ շահույթը կորոշվի հետևյալ բանաձևով.

Թույլատրելի զուտ շահույթ = Շահույթի հաշվարկման բազա x Ակտիվների շահութաբերության նորմա:

Շահույթի հաշվարկման բազան կորոշվի որպես մրցույթի արդյունքում ձևավորված բաժնետոմսերի 100%-ի արժեքի, համաձայն բաժնետոմսերի վաճառքի պայմանագրի Լիցենզավորված անձին փոխանցված պարտավորությունների մեծության, փակման օրվանից մինչև Սակագնային մարժայի վերանայման պահը օգտակար և օգտագործվող ակտիվներում (հիմնական և շրջանառու) կուտակված Ներդրումների գումարի և կուտակված մաշվածության տարբերություն: Շահույթի հաշվարկման բազայում չեն ընդգրկվի այն ներդրումները, որոնք իրականացվում են դրամաշնորհների կամ Հայաստանի Հանրապետության կառավարությունից, կամ Հայաստանի Հանրապետության կառավարության միջնորդությամբ ստացված արտոնյալ վարկերի հաշվին: Նման վարկերի սպասարկման ծախսերը հաշվի են առնվում շահագործման և պահպանման ծախսերում: Շահույթի հաշվարկման բազայում ներառվող շրջանառու կապիտալի մեծությունը կհաշվարկվի որպես լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ բոլոր ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների տարբերություն, որոնք կորոշվեն՝ ելնելով դրանց՝ Հանձնաժողովի հետ համաձայնեցված շրջանառության ժամկետներից: Վարկերի սպասարկման համար անհրաժեշտ դրամական միջոցները հաշվի չեն առնվի:

Սակագնային մարժան կորոշվի հետևյալ բանաձևով.

Սակագնային մարժա = (Անհրաժեշտ հասույթ : Իրացված էլեկտրաէներգիայի քանակություն) - Էլեկտրաէներգիայի գնման միջին կշռութային սակագին:

1.1 Մինչև 2009 թվականն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր օրացուցային տարում Հանձնաժողովը կընդունի ակտիվների շահութաբերության 17,0% հաշվարկային նորմա՝ շահույթի հաշվարկման բազայի նկատմամբ:

2010 թվականից Հանձնաժողովը ակտիվների շահութաբերության նորման կսահմանի՝ ելնելով Հայաստանում ռիսկի նույն մակարդակով գործող ընկերությունների շահութաբերության վերլուծությունից, բայց ոչ պակաս, քան 12,0%:

1.2 Էլեկտրաէներգիա բաշխող ընկերություններին վաճառվող էլեկտրաէներգիայի սակագները փոփոխելու դեպքում Հանձնաժողովը համապատասխան

փոփոխության կենթարկի ինչպես Սպառողների (Բաժանորդների) էլեկտրաէներգիայի վաճառքի մանրածախ սակագները, այնպես էլ Լիցենզավորված անձի Սակագնային մարժան՝ Հանձնաժողովի կողմից թույլատրելի համարվող կորուստների արժեքին վերաբերող մասով:

1.3 Սակագնային մարժայի հաշվարկում ներառվող էլեկտրաէներգիայի թույլատրելի կորուստները կկազմեն՝ 2004 թվականի համար՝ գնված էլեկտրաէներգիայի 17,0%-ը, 2005 թվականի համար՝ 15,0%-ը, 2006 թվականի համար՝ 14,0%-ը, 2007 թվականի համար՝ 13,5%-ը, 2008 թվականի համար՝ 13,0%-ը: Հետագա տարիներին Սակագնային մարժայի հաշվարկում ներառվող թույլատրելի կորուստների մեծությունը կհաշվարկվի Լիցենզիայի 4.10 կետում ամրագրված ընթացակարգով համաձայնեցված՝ Տեխնոլոգիական կորուստների հաշվարկման մեթոդիկայի համաձայն: Տարեկան կտրվածքով հաշվարկված և Լիցենզիայի 4.10 կետում ամրագրված ընթացակարգով համաձայնեցված հաշվարկային կորուստները, որպես տեխնիկական կորուստների և հաշվառքի սարքերի սխալանքով պայմանավորված առևտրային կորուստների գումար, կներառվեն Սակագնային մարժայի հաշվարկում: Այլ բնույթի առևտրային կորուստները Սակագնային մարժայի հաշվարկում կներառվեն լիցենզավորված գործնեության մասին հաշվետվությունների, ինչպես նաև կորուստների նվազեցմանն ուղղված Լիցենզավորված անձի ծրագրերի, այդ թվում՝ ներդրումային, իրականացման արդյունքների ուսումնասիրությունից ելնենով: Սակայն ամեն դեպքում այն կներառվի Սակագնային մարժայի հաշվարկում գնված էլեկտրաէներգիայի 1,0%-ից ոչ պակաս չափով և ոչ ավելի, քան նախորդ տարվա փաստացի կորուստների և հաշվարկային Տեխնոլոգիական կորուստների տարբերություն չափով:

1.4 Սակագները հաշվարկվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հիմքում դրված ԱՄՆ դոլարի և Հայաստանի Հանրապետության դրամի տվյալ տարվա հաշվարկային միջին փոխարժեքի հիման վրա և սահմանվում են Հայաստանի Հանրապետության դրամով: Եթե Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի պաշտոնական տվյալներով փաստացի միջին փոխարժեքի շեղումը հաշվարկայինից գերազանցում է 3,0%-ը, ապա կկատարվի սակագների և Սակագնային մարժայի ճշգրտում, բայց ոչ հաճախ, քան 6 ամիսը մեկ անգամ:

2002-2003թթ. կկատարվի դրամով արտահայտված Սակագնային մարժայի ճշգրտում այնպես, որ տարվա կտրվածքով պահպանվի 4.20 կետով սահմանված մարժայի միջին կշռութային մեծությունը:

Սկսած 2004 թվականից փոխարժեքի փոփոխությունը հաշվի կառնվի միայն Սակագնային մարժայի հաշվարկում ներառված տարադրամով կատարված ծախսերի, մաշվածության և շահույթի մասով: Հայաստանի Հանրապետության դրամով կատարվող ծախսերի փոփոխությունը՝ կախված ներքին շուկայում գների փոփոխությունից, հաշվի կառնվի սակագների վերանայման համար սահմանված կարգով: